ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2019թ. թիվ 548-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019թ. հուլիսի 30-ի «2019 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օր սահմանելու մասին» թիվ 37-Ա որոշման՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. 2019 թվականի դեկտեմբերի 8-ին նշանակել Լոռու մարզի Անտառամուտ համայնքի ղեկավարի հերթական ընտրություններ և այդ համայնքի նորընտիր ղեկավարի կողմից լիազորությունների ստանձնման ժամկետը սահմանել 2019թ. դեկտեմբերի 23-ը:

2. Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝ սույն որոշման մասին ծանուցել Անտառամուտ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

[redacted]

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 20
ք.Վանաձոր